ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴՒՈՑ ՄԵՐՈՑ ԵՒ ՀԱՐԱՉԱՏ ՁԱՒԱԿԱՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ԱՆԴԱՄՈՑՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ, ՈՐ Ի ԹՈՐՈՆԹՕ, ԿԱՆԱԴԱ

Կանադայի Հայոց Թեմի տարեկան Պատգամաւորական ժողովի առիթով համայն հայութեան հոգևոր կենտրոն Աստուածկառոյց Մայր Աթոռ Սուրբ էջմիածնից ջերմ ողջոյնով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում ժողովի բոլոր մասնակիցներիդ:

Սիրելի զաւակներ Մեր, գոհութիւն և փառք ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ Կանադահայ Մեր զաւակները իրենց համայնքային կեանքը զարդարել են եկեղեցաշէն բարի ու աստուածահաճոյ գործերի արգասիքներով: Հոգածու խնամատարութեամբ մեր Եկեղեցին շարունակում է Աւետարանի լոյսը մատուցել հաւատաւոր հայորդեաց, նրանց հոգիները շաղկապել ազգային ու հոգևոր մեր ժառանգութեանը, բորբոքել հայրենասիրական ու ազգասիրական զգացումները:

Սիրելիներ, այսօր սփիւռքի գրեթէ բոլոր համայնքներում մեր Եկեղեցին լուրջ մարտահրաւէրներ ունի յաղթահարելու՝ իր տիրաւանդ առաքելութիւնը արդիւնաւորելու և հայորդիներին Եկեղեցու շուրջ համախմբուած պահելու համար: Արդի աշխարհում նիւթականի գերարժևորման և հոգևորի անտեսման միտումները, որոնք, ցաւոք, արձագանք են գտնում նաև մեր ազգային անդաստանում, անհրաժեշտութիւնն են ստեղծում առաւել աշխոյժ ու արգասաւոր հոգևոր սպասաւորութեան: 2018 թուականը, ինչպէս գիտէք, մեր Եկեղեցում հռչակուած է որպէս երիտասարդութեան տարի, որի ընթացքում Հայրենիքում և Սփիւռքում բազմաթիւ համազգային ծրագրեր ու միջոցառումներ պիտի ի կատար ածուեն՝ զօրացնելու մեր մատաղ սերնդի կապը մեր Եկեղեցու հետ, նրանց հաղորդ դարձնելու ազգային ու հոգևոր մեր հարուստ ժառանգութեանը: Այսու Մեր յորդորն է ձեզ, որ առաջիկայ տարուայ ձեր թեմական ու ծխական գործունէութեան ծրագրերում կարևոր տեղ յատկացնէք երիտասարդ սերունդի հետ տարուող հովուական աշխատանքին, հետևողական ջանքեր բերէք նրանց ներգրաւուելու համայնքային ու ծիսական ակտիւ կեանքի մէջ, նրանց կրողը դարձնելու մեր ազգային նուիրական իղձերի ու երազների: Նոր սերնդին ազգային ու քրիստոնէական արժէքներով կրթելու ու դաստիարակելու առաքելութիւնը երբէք դիւրին չի եղել ու չի լինելու, սակայն աննահանջ ու ջանադիր աշխատանքը՝ յանուն մեր լուսաւոր ապագայի, կարող է յաղթահարել ամեն դժուարութիւն առաքեալի խօսքի համաձայն «յամենայնի կարող եմ այնու, որ զօրացոյցն զիս» (Փիլիպ Դ 13):

Մենք գոհունակ սրտով Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում ձեզ՝ Թեմական պատգամաւորական ժողովի հոգևորական ու աշխարհական անդամներիդ՝ գլխաւորութեամբ բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աբգար Եպիսկոպոս Հովակիմեանի: Մաղթում ենք ձեզ և ձեր ընտանիքներին Տիրոջ խնամքն ու առատ շնորհները:

Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում Կանադայում բնակեալ հաւատաւոր Մեր սիրելի զաւակներին: Ի խորոց սրտի աղօթում ենք և հայցում, որ Բարձրեալն Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի կանադահայ համայնքները և երկնառաք Իր ամենակեցոյց շնորհներով առատապէս օրհնի ու պայծառացնի ազգային ու հոգևոր կեանքը Քրիստոսասէր մեր ժողովրդի այժմ և յաւիտեանս. ամէն:

*«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան»:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 23-ն Մայիսի
յամի Տեառն 2017 և ի թուին հայոց ՌՆԿԶ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1008